Ազգ
Azg
12 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՈՒՐԲԱԹ 208 (4588)
ISSN: 1829-1651

# Փաթուլաեւը ազատ կարձակվի

Ադրբեջանի Գերագույն դատարանը քննել է մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռն ու ապահովել դրա իրականացումը, հաղորդում է «Նովոստի-Ադրբեջանը»: Հիշեցնենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ էր կայացրել Ֆաթուլաեւի գործով եւ պահանջել ազատ արձակել Ֆաթուլլաեւին եւ 28 հազար եվրո փոխհատուցում վճարել նրան: Ֆաթուլաեւը հացադուլ էր հայտարարել՝ պահանջելով կատարել ՄԻԵԴ-ի որոշումը:

Էյնուլա Ֆաթուլաեւը ձերբակալվել էր 2007թ. ապրիլի 20-ին: Նրա ողջ մեղքն այն էր, որ հերքել էր Խոջալուի «ցեղասպանության» պաշտոնական վարկածը:

Հ. Ա.

# Հիպոթեկային վարկերն ավելի արտոնյալ կլինեն մարզերում

*«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրով*

**Երեկ կառավարության որոշմամբ փոփոխություններ կատարվեցին «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրում: Ներկայացնելով փոփոխությունների նախագիծը, ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանն ասաց, որ նախատեսվում է ակտիվացնել մարզերում ծրագրի իրականացման գործընթացը: Նա տեղեկացրեց, որ «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» ծրագրի շրջանակներում մինչ օրս տրամադրվել է 137 վարկ, 1,1 մլրդ դրամ ընդհանուր պայմանագրային գումարով: Այդ ծավալներից մոտ 99 տրամադրվել է Երեւանում, 38-ը՝ մարզերում: «Մեր գնահատականները ցույց են տալիս, որ հիմնական ծանրաբեռնվածությունը դեպի Երեւան է տեղափոխվել, իսկ մարզերում այդ ծրագրի ընդգրկվածությունը բավարար չէ», փաստեց նախարարը, ավելացնելով, որ ըստ առաջարկվող փոփոխությունների, մարզերում պետության կողմից սուբսիդավորման ընդհանուր չափը նախատեսվել է մինչեւ 4 տոկոս: Այդ դեպքում, մարզերում հիպոթեկային վարկավորման տոկոսադրույքը կկազմի 6,5-7 տոկոս:**



**Նախատեսվել է նաեւ մարզերի համար կանխավճարի չափը նվազեցնել՝ 30 տոկոսից հասցնելով 10 տոկոսի, որի արդյունքում այդ գործընթացը մարզերում էականորեն կհեշտանա: Որպես գրավի առարկա մարզերում կընդունվեն նաեւ խոշոր ընկերությունների տրամադրած երաշխավորագրերը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է առաջին 300 խոշոր հարկատուների ցանկում ներառված տրամադրվելիք երաշխիքներին, որոնք նույնպես կհամարվեն ապահովման միջոց: Տիգրան Դավթյանն ընդգծեց, որ այս փոփոխությունների հիմնական գաղափարախոսությունն այն է, որ մարզերի համար ավելի լավ եւ արտոնյալ պայմաններ ստեղծենք եւ չբացառեց, որ հետագայում եւս ճշգրտումներ կատարվեն ծրագրում:**

**Հարցին անդրադարձավ նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ասելով, որ հիպոթեկային վարկերը հիմնականում տրամադրվում են Երեւանում, քանի որ այստեղ ռիսկայնությունը առեւտրային բանկերի համար ավելի կառավարելի է, ինչը չի կարելի ասել մարզերի մասին: Մինչդեռ, ըստ վարչապետի, այս փոփոխություններով ավելի բարենպաստ պայմաններ են ստեղծվում հիպոթեկային վարկերն առաջին հերթին մարզերում հասանելի դարձնելու համար:**

**Ա. Մ.**

**ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ**

# Զոհվել է զինծառայող

Հայաստանի պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ նոյեմբերի 10-ին. ժամը 18-ի սահմաններում N զորամասի մարտական հենակետի հարակից ժայռի ստորին հատվածում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Իշխան Գերասիմի Մովսիսյանի դին: 20-ամյա Մովսիսյանը բանակ էր զորակոչվել Աշտարակի զինկոմիսարիատից: Փաստի առթիվ ՊՆ քննչական ծառայության 9-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քր.օր-ի 365 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) հարուցվել է քրեական գործ եւ կատարվում է նախաքննություն: Նշանակվել է Իշխան Մովսիսյանի դիակի դատաբժշկական փորձաքննություն, կատարվել են այլ անհետաձգելի քննչական գործողություններ: Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

# Վարչապետը մեկնում է Բրյուսել

Այսօր Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը կմեկնի Բրյուսել: Աշխատանքային այցի ընթացքում վարչապետը հանդիպումներ կունենա Եվրամիության առեւտրի հարցերով հանձնակատար Կարել դը Գուխտի, Եվրոպական ժողովրդական կուսակցության փոխնախագահի, եվրոպական խորհրդարանի անդամ Խայիմ Մայոր Օրեխայի, ինչպես նաեւ Բելգիայի ադամանդագործական ընկերությունների ներկայացուցիչների ու «Հայաստանի եվրոպական բարեկամներ» կազմակերպության անդամների հետ:

Հ. Ա.

# ԼՂՀ-ում կարեւորում են կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը

Նոյեմբերի 11-ին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն ընդունել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությանը՝ ղեկավար Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում, որին մասնակցել են նաեւ այլ պաշտոնատար անձինք, հատկապես կարեւորվել է կադրերի պատրաստման ու վերապատրաստման, Ղարաբաղում կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման հարցերը: Շեշտելով, որ անհրաժեշտ է պահպանել համագործակցության առկա մակարդակը, Բակո Սահակյանը նշել է, որ Ղարաբաղում նույնպես արդի տեխնոլոգիաների կիրառումը համարում են տնտեսության զարգացման հիմնական պայմաններից մեկը:

Հ. Ա.

# Հայ փոխնախարարին Վրաստանում պատա՞նդ ե՞ն պահել

**«Սարդարապատ» շարժման նախաձեռնող խումբը երեկ հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ հայ-վրացական սահմանին վերջերս տեղի ունեցած միջադեպի օրինակով ցույց է տրվում, թե Վրաստանի իշխանությունները ինչպես են կրկին Հայաստանի եւ Ջավախքում բնակվող հայերի նկատմամբ լկտի կեցվածք դրսեւորել:**

**«Ոսկե աշնան» ամսօրյակի շրջանակում հոկտեմբերի 24-ին Ախալքալաքում կայանալիք գլխավոր միջոցառմանը պետք է որպես հրավիրյալ ներկա լիներ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանը, որի վերաբերյալ Վրաստանի պատկան մարմինները դիվանագիտական պաշտած հրազեկում են ստացել: Սակայն նշված օրը Բավրայի սահմանային անցակետում վրացական կողմի աշխատակիցները Արսեն Քարամյանին թույլ չեն տվել ազատ տեղաշարժվել դեպի Վրաստանի տարածք եւ երկար ժամանակ սպասեցրել են: Իսկ որոշ ժամանակ անց Թբիլիսիից ժամանած հատուկ ավտոշարասյունը, ներառելով փոխնախարարի ավտոմեքենան, շարժվել է Թբիլիսի, արգելելով փոխնախարարի մուտքը Ախալքալաք: Փաստորեն՝ մեկ-երկու օր Արսեն Քարամյանը պատանդի կարգավիճակում է գտնվել, որից հետո Բագրատաշենի անցակետով վերադարձել Հայաստան:**

**«Սարդարապատ» շարժման նախաձեռնության հայտարարությամբ՝ Վրաստանի իշխանությունների այս պահվածքի առումով մինչեւ օրս հրապարակային որեւէ կեցվածք չեն դրսեւորել Հայաստանի իշխանությունները՝ քար լռություն պահպանելով տեղի ունեցածի մասին, ինչից նախաձեռնությունն իր հայտարարության մեջ եզրակացնում է, թե այս փաստը խոսում է Վրաստանի իշխանությունների կողմից ՀՀ-ի ու հայերի նկատմամբ ցուցաբերվող ակնհայտ արհամարհական եւ նվաստացուցիչ դրսեւորման, իսկ Հայաստանի իշխանությունների էլ՝ Վրաստանի նկատմամբ պարտվողական եւ մշտական զիջողական քաղաքականության, ինչպես նաեւ՝ Ջավախքում բնակվող հայերի նկատմամբ աններելի կեցվածքի անփոփոխ շարունակման մասին:**

Ս. Խ.

# Քաղաքացիներին պաշտպանել հոգեբանական պատերազմից եւ հեռու պահել աղանդներից

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Հայաստանում կրոնական հողի վրա կատարված սպանությունների ու ինքնասպանությունների վերաբերյալ վիճակագրական որեւէ տվյալ չկա: Թեպետ Հայաստանում աղանդավորների թիվը բավական մեծ է, սակայն մինչ այսօր պետական մակարդակով սոցոլոգիական որեւէ հարցում չի անցկացվել՝ պարզելու, թե հանրությունն ինչպես է տրամադրված աղանդների հանդեպ, ինչու են նախընտրում այդ խմբավորումների մեջ մտնել, սոցիալական կամ տարիքային ո՞ր խավն է առավել հակված աղանդավորական խմբավորումների մեջ մտնելու:**

**Ընդհանուր առմամբ ստացվում է, որ Հայաստանում պետական մակարդակով գործունեություն չի իրականացվում աղանդների դեմ պայքարելու համար: Կրոնական կառույցների վերաբերյալ օրենքները ուղղակի չեն գործում, հոգեւորության մասին օրենքն էլ «օդում կախված» վիճակում է:**

**Եթե Ռուսաստանում օրենքով արգելվում է քայքայիչ պաշտամունքների վերաբերյալ գրականության տարածումը, ապա Երեւանի գրախանութներում բավական մատչելի գներով կարելի է գտնել Մալախովի հեղինակած «Скрытый гипноз» գիրքը, որտեղ հաջորդաբար ներկայացվում է, թե ինչպես պետք է մշակել մարդուն:**

*Տես էջ 8*

# «Թրքահայ համայնքը, որուն կը հետեւիմ գնահատանքով, կը նկատեմ որպէս Թուրքիոյ կարեւոր եւ արժէքաւոր հարստութիւն»

*Թուրքիոյ վարչապետին բացառիկ հարցազրոյցը «Ժամանակ» օրաթերթին*

***Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նոյեմբերի 9-ին բացառիկ հարցազրույց է տվել Պոլսո «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Արա Քոչունյանին: Թեեւ մեզ համար առանձնապես նորություններ չկան այդ հարցազրույցում, սակայն քանի որ Էրդողանը հայ խմբագրի հետ հանդիպման ընթացքում հետաքրքրվել է, թե «Ժամանակը» մատչելի՞ է Հայաստանի ընթերցողներին, ապա հարմար գտանք ընդառաջել պրն Քոչունյանի առաջարկին եւ ամբողջությամբ արտատպել հարցազրույցը, միաժամանակ բավարարելով Էրդողանի «հետաքրքրասիրությունը» եւ տեղ հասցնելով նրա՝ մեզ ուղղված մեսիջը, որտեղ, անկեղծ ասած, որեւէ նորություն չգտանք:***



**- Վերջին տարիներուն մեր երկրին մէջ ապրուեցաւ մշտական բարեփոխումներու մթնոլորտ մը ու մեր ժողովրդավարութիւնը հասաւ նոր հարթութեան մը: Վերջին հանրաքուէի արդիւնքը կը ստեղծէ այն ակնկալութիւնը, որ այս թափը աւելնալով պիտի շարունակուի: Յառաջիկայ շրջանին համար ինչպիսի՞ Թուրքիա մը կը նախատեսէք եւ այս ամբողջին մէջ ինչպէ՞ս պիտի ըլլայ փոքրամասնութիւններուն դիրքն ու կացութիւնը:**

- Ինչպէս գիտէք, սեպտեմբեր 12-ին մեր ազգի գնահատանքով գործադրութեան անցաւ սահմանադրական փոփոխութիւնը, որ կը բաղկանայ 26 յոդուածէ: Իրականութեան մէջ այդ 26 յոդուածը չի դիմագրաւեր այն բոլոր փոփոխութիւնները, որոնք փափաքելի են սահմանադրութեան մէջ:

*Տես էջ 8*

## Ընթացիկ

Հոկտեմբերի 27-ին, երբ Աստանայում ավարտվեց նախագահներ Սագսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հանդիպումը, լրագրողների հետ հանդիպեց միայն Ռուսաստանի նախագահը: Եվ սա այն դեպքում, երբ կողմերը, փաստորեն, կարողացել էին հասնել գոնե որոշակի պայմանավորվածության, այն է՝ ռազմագերիների ու զոհվածների դիերի փոխանակում: Մեդվեդեւի ներկայությունը ասուլիսին թերեւս նշանակում է հետեւյալը. ՌԴ նախագահը «հպարտորեն» ընդգծում է, որ իր նախաձեռնությամբ հայ ու ադրբեջանցի գործընկերները պայմանավորվել են առնվազն մեկ հարցում, եւ որ Մոսկվան հետագայում էլ «հովանավորելու» է այս գործընթացը: Մեդվեդեւը նույնիսկ ժամկետներ նշեց՝ «Աստանայում դեկտեմբերի 1-2-ը կայանալիք ԵԱՀԿ նախագահների հանդիպման ժամանակ հասնել հիմնարար սկզբունքների համաձայնությանը», իհարկե, ՌԴ նախագահը «չմոռացավ» ընդգծել՝ «եթե կողմերը լավ աշխատեն այս մեկ ամսում»: Իսկ ի՞նչ արեցին եւ ի՞նչ են անում կողմերը «այս մեկ ամսում»: Հայ-ադրբեջանական եւ ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում մի քանի ռազմագերիների ու զոհվածների դիերի փոխանակումից բացի՝ ոչինչ, այսինքն՝ գրեթե ոչինչ: Մասնավորապես այդ զոհվածների՝ ադրբեջանական հողում հուղարկավորելու արարողության ընթացքում Ալիեւ կրտսերը շեշտեց, որ «ադրբեջանական բանակը այսօր էլ հերոսներ ունի իր շարքերում եւ ամեն պահի կարող է վերականգնել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Մենք առայժմ կարծում ենք, որ խաղաղ բանակցային միջոցները չեն սպառվել, իսկ երբ հակառակում համոզվենք, մեր բանակը կազատագրի մեր հողերը», նշել էր Ալիեւը: Իսկ հայկական կողմից հնչեց պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հայտարարությունը՝ Հանրային հեռուստատեսության եթերում. «Անհրաժեշտության պարագայում հայկական բանակը կրկին խաղաղություն կպարտադրի Ադրբեջանին»:

Բացի տրանից՝ «այս մեկ ամսվա ընթացքում» կողմերը, կոնկրետ Ադրբեջանի նախագահը երեկ նորընտիր Միլի մեջլիսի «իր ամենասիրած» պատգամավորի՝ Մեհրիբան Ալիեւայի հետ այցելեց Ղարաբաղին սահմանակից Ֆիզուլիի շրջան, որտեղ... բացեց մուղամի կենտրոն: Ի դեպ, կենտրոնում «Ղարաբաղ» գործիքային անսամբլը Ադրբեջանի առաջին ընտանիքի համար կատարեց «Ղարաբաղ շիքեստեսի»-ն: Իսկ մեր արտգործնախարար Նալբանդյանը այս օրերին Հնդկաստանում է, որտեղ հանդիպումներ կունենա այդ երկրի ղեկավարության եւ հայ համայնքի հետ: Այստեղ հատկանշական է հիշել մեկ այլ «շահագրգիռ» նախագահի՝ Աբդուլլահ Գյուլին, որը, անկախ նրանից, թե իրեն հերքում է ՀՀ ԱԳՆ-ն, չի դադարում կրկնել՝ «լուռ դիվանագիտություն է ընթանում», որի արդյունքները, եթե, իհարկե, դրանք լինեն, կտեսնենք ընդամենը 19 օրից Աստանայում: Իսկ մինչ այդ «իմիջիայլոց» առանձնացնենք մի քանի իրադարձություններ եւ հայտարարություններ եւս: Այսպես՝ նոյեմբերի 10-ին Եվրոխորհրդի նախարարների կոմիտեի նախագահությունը ստանձնեց Թուրքիան. Անկարան կնախագահի մինչեւ 2011-ի մայիսի 11-ը: Ստրասբուրգում կայացած ասուլիսի ընթացքում թուրք նախարար Դավութօղլուն հայտարարել է. «Մենք մեր նախագահության օրոք, իհարկե, ուշադրության կենտրոնում կպահենք բոլոր «սառեցված» հակամարտությունները»: Դավութօղլուն այսպես է պատասխանել հարցին, թե ի՞նչ ներդրում կարող է ունենալ նախարարների կոմիտեում նախագահությունը ստանձնած Թուրքիան՝ «սառեցված» հակամարտությունների՝ կոնկրետ ղարաբաղյանի կարգավորման գործում: Սա նշանակում է արդեն, որ եթե նույնիսկ, ինչպես պնդում է Գյուլը, ընթանում է «լուռ դիվանագիտություն», ապա մինչեւ Աստանա դժվար թե արդյունք տա, հակառակ պարագայում ինչո՞վ «մեծ ջանասիրությամբ» պետք է զբաղվի Անկարան մինչեւ 2011-ի մայիսի 11-ը: Ավելորդ չենք համարում եւս մեկ անգամ հիշեցնել, որ Հայաստանում իշխող կոալիցիայից Հանրապետական կուսակցությունը շատ ավելի վաղ հայտարարել է, որ «Աստանայում չի համաձայնեցվի որեւէ ճանապարհային քարտեզ առանց Ղարաբաղի մասնակցության ու համաձայնության»: Չնայած քաղաքականության մեջ հաստատապես ոչինչ ասել չարժե, այնուամենայնիվ Աստանայից 19 օր առաջ այնքան էլ իրատեսական չի թվում, եթե չասենք՝ անհնար, Ղազախստանի մայրաքաղաքում ԼՂՀ ներկայությունը: Հետեւաբար, համաձայն հայկական կողմի պաշտոնական հայտարարության, Աստանայում ոչինչ էլ չի համաձայնեցվի կամ կհամաձայնեցվի, բայց որեւէ «փոքրիկ փոխադարձ քայլ», իսկ նախագահ Մեդվեդեւը թերեւս կրկին կհայտարարի՝ «հիմնական աշխատանքը դեռ առջեւում է, եւ կողմերը պետք է լավ աշխատեն»:

### Մինչեւ ե՞րբ

Մի քանի օր առաջ վերլուծաբան **Ռիչարդ Կիրակոսյանը** նկատեց, որ Մինսկի խումբը, խորապես համոզված լինելով, որ Ղարաբաղի վերադարձը Ադրբեջանի կազմ անհնար է, այժմ փորձում է համոզել դա Բաքվին: Կիրակոսյանը, սակայն, նկատեց նաեւ, որ Իլհամ Ալիեւը երբեք չի համաձայնվի այդ փաստին՝ «եւ միայն Ադրբեջանում ժողովրդավարական իշխանությունների ի հայտ գալուն պես այդ երկիրը կգնա փոխզիջումների», նշել էր Կիրակոսյանը: Հետաքրքրական է նաեւ գերմանական արտաքին քաղաքականության խորհրդին կից գործող Բեռնոլդ Բեյցի անվան կենտրոնի տնօրեն **Ալեքսանդր Ռարի** մոտեցումը. «Եթե չլիներ Կոսովոն, ապա կարելի էր խոսել սեփական տարածքային ամբողջականությունը վերականգնել ցանկացող Ադրբեջանի իրավացիության մասին, սակայն Կոսովոյի նախադեպը արդար իրավունք է տալիս հայկական կողմին՝ պահանջելու ճանաչել ԼՂ-ի անկախությունը: Ես անձամբ հակամարտության միակ լուծումը պատկերացնում եմ հետեւյալ կերպ. անհրաժեշտ է Ղարաբաղին տալ անկախ կարգավիճակ, իհարկե ոչ հիմա, հետագայում: Անշուշտ, ադրբեջանցի փախստականների վերադարձի իրավունքը պետք է հարգվի: Սա իր հերթին նախադեպ կլինի նաեւ Աբխազիայի պարագայում», նշել է Ռարը ռուսական «Նեզավիսիմայա գազետային»: Փաստորեն, ըստ վերլուծաբան Ռարի, Ղարաբաղին անկախ կարգավիճակ տալը արդարացված է, ըստ Կիրակոսյանի՝ դրանում համոզված է Մինսկի խումբը, իսկ այս պարագայում, թույլ տվեք հարցնել, մինչեւ ե՞րբ պետք է շարունակվեն բանակցությունները: Այս հարցին թերեւս լավագույնս պատասխանում է Ռիչարդ Կիրակոսյանը. «մինչեւ Ադրբեջանում ի հայտ գան ժողովրդավարական իշխանություններ»: Իսկ դրանք հաստատապես չեն հայտնվի 19 օրում, սովորաբար նրանք չեն «առաջանում» նաեւ «լուռ դիվանագիտությունից», հետեւաբար՝ Աստանայում... կարող է նույնիսկ Մեդվեդեւը չպատասխանել լրագրողների հարցերին. չէ՞ որ «այս մեկ ամսում» կողմերից մեկը մուղամի կենտրոն էր բացում, մյուսը Հնդկաստանում էր ( ինչը նույնպես անչափ կարեւոր է, ի դեպ-Հ. Ա.), իսկ երրորդն ու հիմնականը համբերատար սպասում «խոսելու իր հերթին»: Ղազախստանի մայրաքաղաքում կարող է միայն Աբդուլլահ Գյուլը «խորամանկ ժպտալ»՝ «Հիանալի լուռ դիվանագիտություն»:

# Աստանային մնաց 19 օր

## *Իրավացի՞ է արդյոք Աբդուլլահ Գյուլը*

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ



## Հաստատվեց «Փառքի շքանշան» պարգեւի օրինագիծը

Երեկ կառավարության նիստում հաստատվեց ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի ներկայացրած «Փառքի շքանշան» սահմանելու բարձրագույն պարգեւի օրինագիծը: Այդ պարգեւին կարող են հավակնել պաշտոններ զբաղեցրած կամ զբաղեցնող շատ սահմանափակ թվով անձինք: «**Ազգը**» խնդրեց նախարարին մեկնաբանել, թե ովքեր կարող են արժանանալ այդ բարձրագույն պարգեւին: «Փառքի շքանշանով» կարող են պարգեւատրվել միայն օտարերկրյա պետությունների եւ կառավարությունների գործող եւ նախկին ղեկավարները, միջազգային կազմակերպությունների ղեկավարները, հոգեւոր առաջնորդները, կրոնական գործիչները: Այս դրույթը նաեւ պարունակում է «Պատվո շքանշանի» մասին օրենքը եւ ենթադրվում է, որ այստեղ առաջին դեմքերն են, մյուսները ըստ դասակարգման՝ միջպետական հարաբերությունների ամրապնդման եւ զարգացման, խաղաղության, միջազգային անվտանգության, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության գործում ներդրած նշանակալի ավանդի, տնտեսական կապերի զարգացմանը նպաստող, հոգեւոր, մշակութային արժեքների պահպանման գործունեության համար»: Որոշումը ընդունվեց եւ հաջորդ քայլը կլինի շքանշանի դիզայնի մրցույթի կազմակերպումը:

Մ. Մ.

## Փոփոխություն առողջապահության նախարարությունում

Երեկ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ առողջապահության նախարարության բուժօգնության կազմակերպման վարչության պետ Վահան Պողոսյանը նշանակվել է առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար: Իսկ աշխատակազմի նախկին ղեկավար Գագիկ Սայադյանն իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից:

Մ. Մ.

## Քիմիական ոլորտի աշխատակիցներին ամիսներով չեն վարձատրում

Կառավարության շենքի դիմաց երեկ կրկին մարդաշատ էր: Այս անգամ «Նաիրի» գործարանի մի քանի տասնյակ աշխատակիցներ պահանջում էին կառավարությունից ուշադրություն դարձնել իրենց խնդրին: Չնայած գործարանի տնօրենությունը բազմիցս խոստացել է, որ աշխատավարձերի հարցը կլուծվի, սակայն, բողոքավորների ասելով, հուլիսից նրանք աշխատավարձ եւ արձակուրդային չեն ստացել:

«Գումար չունեմ աշխատանքի գնալու համար ուղեվարձս վճարելու, ամոթ է ասելը, բայց ի՞նչ արած: Մենք ավել բան չենք ուզում, մեր աշխատածի վարձատրությունն ենք պահանջում», ասում էին նրանք:

Ցուցարարներին ընդունած էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանը մի քանի օր ժամանակ խնդրեց խնդրին ծանոթանալու եւ հարցերին պատասխանելու համար:

«Պարոն նախարար, մենք մեր աշխատավարձն ենք ուզում, իմ երեխան սոված է, ես գումար չունեմ հաց գնելու, ի՞նչ պետք է լինի մեզ հետ», ասում էին ցուցարարները:

«Հասկանում եմ, եթե երեք ամիս աշխատավարձ չես ստացել, պատկերացնում եմ՝ ինչ վիճակում ես, սակայն ինձ ժամանակ տվեք հարցը լուծելու համար», ասաց նախարարը: Ցուցարարները պատմեցին, որ աշխատակիցներից մեկի երեխային պետք է վիրահատեն, գումար էր հարկավոր, աշխատավարձի չգոյության պայմաններում ինչպես լուծել հարցը:

«Կլուծենք, հարցն անպայման կլուծենք», խոստացավ նախարարը: Ցուցարարներն էլ նախարարին մինչեւ երեքշաբթի ժամանակ տվեցին խնդրին ծանոթանալու, հարթելու համար:

Երեկ իրենց 7 ամսվա աշխատավարձն էին պահանջում նաեւ «Վանաձոր-քիմպրոմ» գործարանի մոտ 50 աշխատակիցները: Դժգոհող աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ ընկերության գործադիր տնօրեն Ալեքսանդր Սնեգիրյովը խոստացել է լուծել աշխատավարձի հարցը:

Հ. Հ.

## Միսաք Քելեշյանը բացահայտում է Ցեղասպանության անհայտ էջերը

Ամերիկաբնակ Միսաք Քելեշյանը չի ապրում Հայաստանում, բայց ամբողջ հոգով կապված է Հայաստանին, հայ ժողովրդին, նրա անցյալին ու ներկային: Նա ծնունդով Լիբանանից է, մասնագիտությամբ ինժեներ է: Մեր հայրենակիցն այսօր նվիրական աշխատանք է կատարում, նրա նպատակն է բացահայտել Հայոց ցեղասպանության անհայտ էջերը: Միսաք Քելեշյանը երեկ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում էր, նա հանդես եկավ հանրային ելույթով: Մինչեւ ելույթը թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը ներկայացրեց մեր հայրենակցին:

Ցեղասպանությունից հետո բազմաթիվ հայ երեխաներ որբացել են: Տեղահանված ու որբացած շատ մանուկներ հասել են Լիբանան: Միսաք Քելեշյանը նշեց, որ Բեյրութից ոչ հեռու գտնվող Այնթուրա փոքրիկ գյուղում հայ որբերին թուրքացնելու ծրագիր էր սպասվում. Ջեմալ փաշան Այնթուրայի ֆրանսիական քոլեջի շենքում հայ երեխաների համար որբանոց է բացել: Մ. Քելեշյանը հայտնաբերել է դավանափոխ անելու այդ ողջ կառույցն ու մեխանիզմը:

Միսաք Քելեշյանի մասին գրել են աշխարհի տարբեր թերթերում, նրա մասին նաեւ գրել է բրիտանացի հայտնի լրագրող Ռոբերտ Ֆիսքը: Մեր հայրենակցի նվիրական գործին մի քանի անգամ անդրադարձել է նաեւ «**Ազգը**»:

Ի. Գ.

## Դատապարտյալների բողոքի ակցիա տանիքում

**Դատապարտյալների հիվանդանոց քրեակատարողական հիմնարկի 15-ից ավելի դատապարտյալներ երեկ հացադուլ են սկսել եւ իրենց բողոքի ակցիան իրականացնելու համար բարձրացել են հիվանդանոցի տանիք ու մոտ 4,5 ժամ մնացել այնտեղ: Հիվանդանոցի վարչությունը բազմիցս փորձել է հանգստացնել բողոքավորներին, սակայն չի հաջողվել: Դատապարտյալների պահանջը եղել է հանդիպում արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանի հետ՝ իրենց խնդիրները ներկայացնելու համար:**

**Իսկ նրանց խնդիրները վերաբերում են ՁԻԱՀ-ով տառապող շատ դատապարտյալների բուժմանը, առանձնացված վայրերում պահելուն, եւ որ իրենք մատնված են բացարձակ անուշադրության: Երբ դատապարտյալները օրեր առաջ իրենց պահանջներով գրավոր դիմել են կալանավայրերի վարչության պետ Հայկ Հարությունյանին՝ պահանջելով ապահովել իրենց բուժումը, պրն Հարությունյանը հանդիպել է նրանց հետ, սակայն ասել է, թե իրենց ուժերից վեր է նրանց բուժելը: Այդ պատասխանը նրանց դրդել է բարձրանալ տանիք...**

**Ի վերջո, դատապարտյալների հետ կալանավայրերի վարչության աշխատակիցները կարողացել են համաձայնություն ձեռք բերել ու իջեցնել նրանց տանիքից, խոստանալով, որ առաջիկա շաբաթվա ընթացքում առաջարկված պահանջները կկատարվեն:**

Մ. Մ.

## Կարեն Կարապետյանը հրաժարվեց

**Երեկ հրաժարական է ներկայացրել ՀՀՇ երիտթեւի ղեկավար Կարեն Կարապետյանը: Վերջինս, ինչպես հայտնի է, ՀՀՇ-ում տեղի ունեցած հայտնի սկանդալներից հետո ամիսներ առաջ հրաժարական էր ներկայացրել նաեւ ՀՀՇ լրատվական ծառայության ղեկավարի պաշտոնից:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Ռիժկովն ու Զատուլինը՝ ղարաբաղյան հարցի մասին





Երեկ Ազգային ժողովի Ոսկեզօծ դահլիճում տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի խորհրդարանների միջխորհրդարանական հանձնաժողովի 19-րդ նիստը՝ համանախագահությամբ հայկական կողմից ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի հանձնաժողովի նախագահ **Արամ Սաֆարյանի** եւ ռուսական կողմից՝ ՌԴ դաշնային խորհրդի բնական մենաշնորհների հանձնաժողովի նախագահ **Նիկոլայ Ռիժկովի**: Օրակարգի հիմնական հարցը բարձր տեխնոլոգիաների, ինովացիոն տնտեսության ոլորտներում երկու երկրների համագործակցության խթանմանն էր վերաբերում: Սաֆարյանն ու Ռիժկովը նիստից հետո հանդիպեցին լրագրողների հետ, լրագրողների հարցերին պատասխանեց նաեւ ԱՊՀ-ում հայրենակիցների հարցերով հանձնաժողովի փոխնախագահ **Կոնստանտին Զատուլինը**:

Մինչ նրանց տեսակետների ներկայացումը նշենք, որ հանձնաժողովի հաջորդ նիստը, որտեղ քննարկվելու են ԼՂՀ հարցը, հայոց լեզվի վիճակը Ռուսաստանում եւ ռուսաց լեզվի վիճակը Հայաստանում, տեղի կունենա 2011 թ ապրիլին, Յարոսլավլում: Ն. Ռիժկովը լրագրողներին փոխանցեց այն մտահոգությունները, որ հայտնվել էին 20-րդ նիստի օրակարգի ձեւավորման ժամանակ՝ ԼՂՀ հարցի հետ կապված: Հնչել են կարծիքներ, որ պետք է քննարկել հիմնախնդրի լուծման ներկա վիճակը ողջ խորությամբ. «Եթե միջազգային կազմակերպությունները, պետությունների ղեկավարները չեն կարողանում հարցի լուծումը գտնել, մենք տեսակետ հայտնել կարող ենք, բայց միայն այդքան. մի կողմից՝ այդ հարցը չենք կարող շրջանցել, մյուս կողմից գործնականում չգիտենք, թե ի՞նչ վճիռներ են ընդունվելու, քանի որ չափից դուրս մեծ թվով մարդիկ եւ միջազգային կազմակերպություններ են զբաղվում այդ հարցերով: Դրա համար մենք պայմանավորվել ենք, որ այս հարցով տեղեկատվություն կպատրաստեն ՌԴ եւ Հայաստանի ԱԳՆ-ները: Իսկ եթե այդ ընթացքում դրությունը վատանա, Աստված չանի, իրավիճակը լրջանա՝ մենք կողքի կանգնած չենք մնա. երբ տուրուդմփոց է՝ մենք չենք կարող ձեւ անել, որ ոչինչ չենք նկատում, իհարկե, կհայտնենք մեր կարծիքը: Աստված տա՝ չբարդանա: Բայց մամուլից քաղված տեղեկատվության հիման վրա անգամ մենք զգում ենք, որ բոլոր ուղղություններով հարցը փակուղի է մտել, իսկ ինչպե՞ս դուրս գալ այդ փակուղուց՝ չգիտենք: Մենք զգում ենք, որ հարեւանները (ձեր եւ մեր), ձեռքերը ծալած չեն նստում, այնուամենայնիվ, պատրաստվում են: Իմ կարծիքով գուցեեւ գտնվեն դեռ ինչ-որ կառուցողական որոշումներ, բայց պետք չէ մոռանալ, թե Հայաստանի ժողովուրդն ինչպե՞ս կընդունի կառուցողական լուծումների ինչ-ինչ շեղումները, եթե դրանք լինեն, ես մեծ կասկածներ ունեմ այս առումով: Դրա համար մեզ մոտ տպավորություն է ձեւավորվել, որ իրավիճակը բարդ է:

«**Ազգը**» հանդիպումից հետո Ռիժկովից հետաքրքրվեց, թե արդյո՞ք այդ դեպքում Աստանայում հնարավոր է ճանապարհային քարտեզի ստորագրումը: Նա այդպիսի փաստաթղթի ստորագրումն Աստանայում հնարավոր չհամարեց:

Իրավիճակի բարդության մասին խոսեց նաեւ ՌԴ Պետդումայի պատգամավոր Կոնստանտին Զատուլինը, չնայած նրա դիտարկումները բերել էին այն մտքին, որ պատերազմի վերսկսումը հենց միջնորդների շահերից չի բխում՝ նրանց հեղինակության խնդիր է: Զատուլինը կրկնեց, որ հարցը պետք է լուծվի առանց ուժի կիրառման՝ խնդրի վերջնական լուծման ժամանակ վերադարձնելով Ղարաբաղին հարակից եւ հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքները: Բայց դրան հասնելն, ըստ Զատուլինի, բարդ է, քանի որ հայերս անհանդուրժողական ենք որեւէ զիջման հանդեպ, դա էլ պայմանավորված է ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ իրատեսական մոտեցում ցուցաբերելու Ադրբեջանի ապակառուցողականությամբ, անպատրաստ լինելով: Փոխզիջումների հարցում համաձայնության գալու դեպքում հարցի լուծման հեռանկար կարող է լինել, սակայն ոչ ոք այսօր չի կարող ասել, թե դրա համար որքա՞ն ժամանակ կպահանջվի: Աստանայի ԵԱՀԿ-ի գագաթաժողովում, ըստ Զատուլինի, ղարաբաղյան կարգավորման գործընթացում կարող է դրական առաջընթաց գրանցվել, քանի որ ոչ ոք չի ուզում ռազմական գործողությունների վերսկսում, իսկ խաղաղ լուծման այլընտրանքը ռազմական գործողություններն են: Նա նաեւ նշեց, որ ռազմական գործողությունները չեն բխում ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահ երկրների շահերից, այդ իսկ պատճառով համանախագահների մոտեցումներն այս հարցում համընկնում են եւ միտված են կարգավորման ձեւաչափի պահպանմանը: Զատուլինը մտահոգված էր սահմանային հրաձգությամբ, որը սպառնալիք համարեց խաղաղության համար: Ըստ նրա՝ Ռուսաստանը շահագրգիռ չէ պատերազմի վերսկսմամբ, իսկ ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը նա տեսնում է արցախցիների ինքնորոշման սկզբունքի իրացմանը զուգահեռ՝ ԼՂՀ շրջակա տարածքների զուգահեռ վերադարձմամբ: Ադրբեջանի ռազմական սպառազինությունների հարցին ի պատասխան՝ Զատուլինը նկատեց, թե ռազմական սպառնալիքը կախված է օդում, բայց խորհուրդ տվեց, որ որեւէ մեկը չփորձի իր բախտը՝ ղարաբաղյան պատերազմի օրինակը հիշելով. «Ոչ ոք ինձ չի կարող համոզել, որ սպառազինությունների մեծ քանակը առավելություն կտա Ադրբեջանին... Շփման գծում հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը ստատուս-քվոյի կողմից խախտում են: Նա, ով նման խախտումների է դիմում, իսկ նախաձեռնությունն այստեղ Ադրբեջանինն է, լուրջ խնդիր, սպառնալիք է խաղաղության համար», ասաց Զատուլինը՝ այս առումով հիշեցնելով, թե տարածաշրջանում խաղաղության իմաստով ռազմաբազայի տեղակայման պայմանագրի երկարաձգման վավերացումը Հայաստանը պետք է արագացնի:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Հ.Գ. Անդրադառնալով Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական կապերին՝ Ն. Ռիժկովը նկատեց, թե վիճակը լավացել է. ոչ թե նրա համար, որ նոր մարդ է եկել, թեեւ դրանից էլ բան է կախված. «Մեր գլխավոր առավելությունն այն է, որ մեր աշխատանքը սիստեմավորված է, երկու անգամ տարին հավաքվում ենք, դրանից առաջ օրակարգ է ձեւավորվում, մեքենան աշխատում է»: Ընդհանուր առմամբ՝ նա հետաքրքրական գնահատեց այդ կապերը, որոնք սկզբում նրա ձեւակերպմամբ ֆորմալ բնույթ էին, իսկ այժմ աշխույժ են՝ բանավեճերով հարուստ, մի խոսքով՝ դրական: Բայց նրան անհանգստացնում էին այն կարծիքները, որ երկու անգամ տարում հանդիպելը շատ է, փող է ծախսվում:*

# Հայաստանի նախագահն ընդունել է Ն. Ռիժկովին եւ Կ. Զատուլինին

**Երեկ Հայաստան-Ռուսաստան միջխորհրդարանական հանձնաժողովի պատվիրակությանը՝ հանձնաժողովի համանախագահներ Արամ Սաֆարյանի եւ Նիկոլայ Ռիժկովի գլխավորությամբ, մինչեւ միջխորհրդարանական հանձնաժողովի նիստը, ընդունել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահն ընդգծել է, որ վստահորեն զարգացող հայ-ռուսական ռազմավարական գործընկերության եւ երկկողմ կապերի սերտ զարգացման գործում իր դերն ունի նաեւ միջխորհրդարանական համագործակցությունը. «Հայաստանը գնահատում եւ երախտագիտությամբ է վերաբերվում իր բարեկամներին», ասել է նախագահ Սարգսյանը: Այդպիսի բարեկամներից մեկը, Սերժ Սարգսյանի խոսքով՝ ՌԴ Պետական դումայի ԱՊՀ եւ հայրենակիցների հետ կապերի հարցերով հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ Կոնստանտին Զատուլինն է, ում նախագահը պարգեւատրել է Պատվո շքանշանով՝ ՀՀ-ի եւ ՌԴ-ի միջեւ համագործակցության խորացման, ժողովուրդների միջեւ բարեկամության ամրապնդման եւ զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար:**

**Նիկոլայ Ռիժկովը հանրապետության ղեկավարին ներկայացրել է ՀՀ Ազգային ժողովի եւ ՌԴ Դաշնային ժողովի համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի նախորդ նիստերում կայացված որոշումների արդյունքում մինչ այժմ իրականացված աշխատանքն ու Երեւանյան նիստում քննարկվելիք հարցերը:**

*ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԳԻ ՀԱՂԹԱՐՇԱՎ*

# Համերգի վերածված մրցույթ

**Կոտայքի մարզում կա 101 դպրոց, որոնցից գրեթե բոլորը՝ շուրջ հարյուրը, մասնակցել են Ռուսաստանի հայերի միության, «Ռուսկի միր» հիմնադրամի եւ Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախաձեռնած «Երգը բարեկամության կամուրջն է» ռուսերեն երգի մրցույթ-փառատոնին: Ընդհանուր առմամբ մարզում ավելի քան 100 աշակերտ այս օրերին երգել է ռուսերեն:**

**Նոյեմբերի 10-ին Չարենցավան քաղաքի երաժշտական դպրոցում ոչ թե մրցույթի մարզային փուլի ամփոփումն էր, այլ բարձր մակարդակի համերգ. անգամ դահլիճում ներկա Ռուսաստանի դեսպանատան ներկայացուցիչները, «մի կողմ դնելով դիվանագիտական զսպվածությունը», չէին թաքցնում հիացմունքը՝ կոտայքցի երեխաների փայլուն ռուսերենից, կատարողական վարպետությունից եւ դահլիճում տիրող մթնոլորտից: Մարզն իրոք ամենայն պատասխանատվությամբ էր մոտեցել փառատոնին, ու բոլորովին պատահական չէ, որ հատկապես այս մարզում՝ հինգ հաղթողներին որոշելիս, ժյուրին մեծ դժվարությունների հանդիպեց, եւ Ռուսաստանի հայերի միությունը գնաց փառատոնի համար աննախադեպ քայլի՝ «Հայկական երգը՝ ռուսերեն կատարմամբ» անվանակարգում հաղթողներ ճանաչվեցին երկու հոգի, իսկ «Ռուսական ռոմանս»-ում հաղթողի հետ բոլոր ներկայացվածները հրավիրվեցին նոյեմբերի վերջին Երեւանում անցկացվելիք փառատոնի գալահամերգին:**

**«Մինչ առաջին կատարումը ինձ թվում էր, թե մրցույթի հերթական փուլին եմ ներկա, սակայն առաջին իսկ կատարումից ես հայտնվեցի համերգում», նկատեց ՌՀՄ փոխնախագահ, փառատոնի կազմկոմիտեի ղեկավար Վլադիմիր Աղայանը: Իրոք, ամեն կատարողի (եւ ոչ թե մասնակից երեխայի) հետ բեմ էր բարձրանում «անհատական» դաշնակահարը, ամեն կատարող այդ օրը արժանի էր հաղթանակի: Պատահական չէ, որ փառատոնին մասնակից բոլոր աշակերտները ՌՀՄ-ից ստացան պատվոգրեր, իսկ մարզպետարանի մշակույթի բաժնի պետ Արա Սիմոնյանը բոլոր անվանակարգերում հաղթողներին պարգեւատրեց Կոտայքի մարզպետի պատվոգրերով:**

**Առհասարակ, արդեն 6-րդ մարզում փառատոնի ընթացքին հետեւելիս կարելի է փաստել մի շարք հանգամանքներ. նախ՝ ռուսերեն երգի կատարումը բոլոր մարզերում ընդունվում է մեծ ոգեւորությամբ, Գյումրի-Վանաձորից սկսած մինչեւ Չարենցավան ու Արտաշատ փառատոնը վերածվել է բարեկամության տոնի: Մասնակից երեխաները մեծ հուզմունքով եմ մոտենում իրենց ելույթին, մանկավարժներն ու ծնողները ամենայն պատասխանատվությամբ են մոտենում երեխաների ռուսերեն խոսքին, նրանց բեմական հագուստին, «չգիտես որտեղից» հանրապետության հեռավոր մարզերում «հայտնաբերվում են» ռուսական տարազներ: Ինչ վերաբերում է կոնկրետ մասնակիցների կատարմանը, ապա, անշուշտ, թերություններ՝ հատկապես ձայնային առումով կան, սակայն կան նաեւ իրոք հրաշալի կատարումներ, կոնկրետ ռուսական ռոմանսի կատարումը բոլոր մարզերում էլ պարզապես հաճելիորեն զարմացնում է: Երեխաները նաեւ շատ լավ ռուսերենով կարողանում են ներկայացնել իրենց երգը, նրա հեղինակներին, անգամ վերջիններիս կենսագրական որոշ մանրամասնություններ: Օրինակ՝ Չարենցավանում ՌԴ դեսպանատան ներկայացուցիչը նույնիսկ զարմացած էր, թե ինչպես փոքրիկ Անին ներկայացրեց հանրահայտ «Կատյուշա» երգի ստեղծման պատմությունը:**

**Ինչեւէ, արձանագրենք, որ հանրապետության 6-րդ մարզում արդեն ռուսական երգի փառատոնը կայացավ. Չարենցավանում նույնիսկ վերածվեց բարձր մակարդակի համերգի:**

**Հ. ԱՓՅԱՆ**
**Չարենցավան-Երեւան**

# Բոնուս «Վիվասելի» կանխավճարային բոլոր բաժանորդների համար

**Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, 2010-ի նոյեմբերի 10-ից մինչեւ 2011-ի հունվարի 10 ընկերության բոլոր կանխավճարային բաժանորդները, բացառությամբ «Բիզնես վերահսկում» կորպորատիվ փաթեթի, հնարավորություն ունեն, զանգ ստանալով ՀՀ այլ բջջային եւ քաղաքային ցանցերից, խոսակցության յուրաքանչյուր րոպեի դիմաց ստանալու բոնուս՝ 1 րոպե անվճար ներցանցային խոսելաժամանակ: Բոնուսի առկայության դեպքում «Վիվասել-ՄՏՍ»-ի ցանցում կատարած զանգերի դիմաց նախ սպառվում է բոնուսային խոսելաժամանակը, եւ միայն դրա զրոյանալուց հետո գումարը գանձվում է հիմնական հաշվից: Բոնուսները կուտակելու համար անհրաժեշտ է բջջայինից ուղարկել *210# անվճար հրահանգը, իսկ կուտակված բոնուսային խոսելաժամանակը կարող է օգտագործվել մինչեւ 2011-ի հունվարի 31-ը:**

**Ա. Մ.**

# «Յունիբանկ»-ը ներկայացնում է բիզնեսի համար նախատեսված նոր վարկատեսակ՝ «Ունիվերսալ»

Փոքր եւ միջին բիզնեսի, ինչպես նաեւ անհատական ձեռնարկատերերի աջակցման նպատակով «Յունիբանկ»-ը մշակել է նոր վարկատեսակ «Ունիվերսալ»՝ սկսած 10% տարեկան տոկոսադրույքով: Նոր վարկատեսակի պայմանների համաձայն, դրամական միջոցները տրամադրվում են մինչեւ 48 ամիս ժամկետով, վարկի գումարը կազմում է 50 000-500 000 ԱՄՆ դոլար: Թույլատրվում է վարկի վաղաժամկետ մարում առանց սահմանափակումների: Վարկային հայտերի ընդունման վերջնաժամկետն է 31.12.10թ.:

Այսօր «Յունիբանկ»-ի բիզնես-վարկավորման ծրագրերն ամենապահանջվածներից են շուկայում: Արդյունաբերության վարկավորման ծավալներով «Յունիբանկ»-ը զբաղեցնում է առաջին տեղը ՀՀ բանկային համակարգում: Բիզնես-վարկավորման ծրագրերի շրջանակներում հաճախորդին առաջարկվում են մասնագիտացված վարկեր՝ հաշվի առնելով հաճախորդների տարբեր խմբերի պահանջմունքները եւ տվյալ բիզնեսի առանձնահատկությունները: Նման մոտեցումը հաճախորդի համար ապահովում է համալիր բանկային սպասարկում եւ երկարաժամկետ համագործակցություն:

2010թ.-ի երրորդ եռամսյակի վերջին «Յունիբանկ»-ի ակտիվների ծավալը գերազանցել է 106 մլրդ դրամը: Բանկի վարկային պորտֆելի ծավալը 2009թ.-ի հաշվետու ժամանակահատվածի համեմատ աճել է 32,6%-ով եւ 30.09.10թ.-ի դրությամբ կազմել մոտ 74 մլրդ դրամ: Բիզնես-վարկերին բաժին է ընկել 47,2 մլրդ դրամը:

Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք Բանկի կայքէջի /www.unibank.am/ «Փոքր եւ միջին բիզնեսի վարկավորում» բաժինը կամ զանգահարեք հեռախոսակապի կենտրոն 59-55-55 հեռախոսահամարով: Հարցերը Բանկի մասնագետներին կարելի է ուղղել նաեւ կայքում տեղադրված հետադարձ կապի ձեւը լրացնելու միջոցով:

ԱԶԳ

# Միջազգային

## Արժութային կարգավորման եւ տնտեսության հարցեր «Մեծ քսանյակի» գագաթաժողովում

Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում երեկ բացվեց «Մեծ քսանյակի» գագաթաժողովը, որտեղ ուշադրության կենտրոնում են արժութային կարգավորման եւ համաշխարհային տնտեսության հարցերը:

Սեուլ մեկնելուց առաջ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման գագաթաժողովի մասնակիցներին կոչ է արել համատեղ ջանքերով անրադառնել ճգնաժամից նոր-նոր ապաքինվող համաշխարհային տնտեսությունը: Նա խոստացել է, որ ԱՄՆ-ը կստեղծի նոր աշխատատեղեր եւ կպայքարի առեւտրի անհավասարակշռվածության դեմ:

Այդ անհավասարակշռվածության համար ԱՄՆ-ը մեղադրում է Չինաստանին, որը սեփական արժույթի աճը զսպում է արտահանությունը խթանելու համար: Նման քաղաքականության շնորհիվ Պեկինը կարողացել է կուտակել վիթխարի արժութային պաշարներ:

Մյուս երկրները հիշեցնում են, որ ԱՄՆ-ը ավելացնում է արժույթի ծավալը, որը նույնպես կարող է հանգեցնել դոլարի փոխարժեքի անկմանը:

Նոյեմբերի 11-ին գագաթաժողովը սկսվել է աշխատանքային ճաշկերույթով, իսկ հիմնական բանակցությունները տեղի կունենան այսօր, նշում է BBC-ն:




Որոշ փորձագետներ կարծում են, որ գագաթաժողովի մասնակիցները չեն հասնի կոնկրետ պայմանավորվածությունների եւ ի վերջո կբավարարվեն ընդհանուր հայտարարություններով:

## Նյու Յորքում պայթեցված երկնաքերների տեղում կլինեն ջրվեժներ



Նյու Յորքում 2001-ի սեպտեմբերի 11-ին պայթեցված երկնաքերների տեղում կկառուցվի «Արտացոլվող բացակայություն» հուշահամալիրը, որը կունենա երկու ջրվեժ: Երեկ անցկացվել է դրանցից մեկի փորձարկումը, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Ութ պոմպերը մեկ րոպեում պետք է արտամղեն մոտ 200 հազար լիտր ջուր: Երկրորդ ջրվեժի փորձարկումը նախատեսվում է անցկացնել 2011-ի գարնանը:

Ճարտարապետ Մայքլ Արադի մտահղացման համաձայն, յուրաքանչյուրը 54 մետր շրջագծով երկու ջրավազանները պետք է դառնան հուշահամալիրի գլխավոր տարրը: Ջրվեժները նմանատիպ ամենամեծ ձեռակերտ կառույցները կլինեն Հյուսիսային Ամերիկայում: Ջուրը կթափվի Համաշխարհային առեւտրի կենտրոնի զույգ աշտարակների տեղում կառուցված ավազանների մեջ:

Ջրավազանների շուրջը կտնկվի մի քանի հազար ծառ, կտեղադրվեն բրոնզե ցուցանակներ զոհերի անուններով, ինչպես նաեւ կպահովվի գիշերային լուսավորություն:

Շինարարական աշխատանքները կավարտվեն 2011-ի գարնանը, որպեսզի հուշահամալիրի բացումը տեղի ունենա սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունների 10-ամյակի օրը:

## «Կոմերսանտը» պարզել է 10 «ռուսական լրտեսներին» մատնած անձի անունը

ԱՄՆ-ում ՌԴ արտաքին հետախուզության ծառայության (CBP) 10 աշխատակիցների բացահայտումը եւ արտաքսումը դավաճանության հետեւանք են, գրում է մոսկովյան «Կոմերսանտ» թերթը:

Թերթին հաջողվել է պարզել գերատեսչությունում աշխատած մասնիչի անունը, որը ԱՄՆ-ին տեղեկացրել էր «Անլեգալներ» ծրագրով գործող ռուս հետախույզների մասին: Դա գնդապետ Շչերբակովն է, որ CBP-ում վերահսկում էր ամերիկյան վարչությունը:

Լրագրողները պարզել են, որ Շչերբակովի դուստրը վաղուց ապրում է ԱՄՆ-ում, իսկ Госнаркоконтроль-ում աշխատած որդին Ռուսաստանից հեռացել էր հետախույզների մերկացումից առաջ: Գնդապետ Շչերբակովը ԱՄՆ էր մեկնել ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի վաշինգտոնյան այցելությունից 3 օր առաջ: Այցին հաջորդել էին «ռուսական լրտեսների» ձերբակալությունները:

Թերթը նաեւ նշում է, որ մեկ տարի առաջ Շչերբակովը հրաժարվել էր պաշտոնի բարձրացումից, ըստ երեւույթին վախենալով սուտ դետեկտորով ստուգման ենթարկվելուց: ԱՄՆ-ում Շչերբակովը ակտիվորեն աշխատել է քննիչների հետ, հանդիպել կալանավորված CBP որոշ գործակալների հետ: Մասնավորապես նա օգնել է Խուան Լազարոյի (Խորհրդային Միության հերոս Միխայիլ Վասենկով) ինքնության բացահայտմանը: Շչերբակովը մտել է նրա բանտախուց եւ ռուսերեն արտաբերել է նրա իսկական անունը: Բանտարկյալը ձեւացրել է, թե չի հասկանում եւ իրեն ուղղված մեղադրանքները սխալ է համարում: Բայց ի վերջո խոստովանել է իր ով լինելը, երբ նրա առջեւ դրել են Մոսկվայից Շչերբակովի բերած CBP-ի գործը:

ԱՄՆ-ում «ռուսական լրտեսներին» ձերբակալեցին 2010-ի հունիսի 27-ին: Արեւելյան ափի տարբեր քաղաքներում մեկ օրում կալանավորեցին 10 մարդու: Բոլորը մեղադրվեցին օտար պետության հետ անօրինական կապեր ունենալու մեջ: Հուլիսի 9-ին CBP-ի 10 աշխատակիցները փոխանակվեցին Ռուսաստանում լրտեսության համար դատված 4 անձանց հետ (Իգոր Սուտյագին, Սերգեյ Սկրիպալ, Ալեքսանդր Զապորոժսկի, Գեննադի Վասիլենկո):

CBP-ի բացահայտված գործակալներին ՌԴ-ում նպաստներ առաջարկվեցին: ԱՄՆ-ից արտաքսվելուց հետո Լազարոն (Վասենկով) հայտարարեց, որ ինքը ՌԴ քաղաքացի չէ, ռուսերեն չգիտի եւ ուզում է վերադառնալ կնոջ՝ Վիկի Պելաեսի երկիրը, այսինքն՝ Պերու:

## Մոնրեալում սպանվել է մաֆիայի պարագլուխ Ռիցուտոն

Կանադայի Մոնրեալ քաղաքում սպանվել է տեղի մաֆիական խոշորագույն խմբավորման պարագլուխ Նիկոլո Ռիցուտոն: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ 86-ամյա Ռիցուտոյին գնդակահարել են նրա տան մեջ:

Սիցիլիայում ծնված Ռիցուտոն 1954-ին տեղափոխվել է Կանադա: Նա Կոտրոնի կլանի անդամ էր, որը Մոնրեալում վերահսկում էր թմրաբիզնեսի մեծ մասը: Նաեւ կապված էր տեղի սիցիլիական կլանների եւ ԱՄՆ-ում, Վենեսուելայում, Իտալիայում գործող խմբավորումների հետ:

Ենթադրվում է, որ 1978-ին Ռիցուտոն մասնակցել է մրցակից կալաբրիական կլանի պարագլուխ Պաոլո Վիոլիի սպանությանը: Վիկ Կոտրոնիի մահից հետո Ռիցուտոն դարձավ Մոնրեալի մաֆիայի պարագլուխը: Նրա ղեկավարությամբ հերոին էր մատակարարվում Կանադա եւ ԱՄՆ:

Ռիցուտոյի որդի Վիտոն 2004-ին ձերբակալվել, ապա արտաքսվել է ԱՄՆ, որտեղ դատվել է սպանության համար: Նրա որդի Նիկ Ռիցուտոն 2009-ին Մոնրեալում սպանվել է փողոցային փոխհրաձգության ժամանակ: Նիկի, ինչպես նաեւ Նիկոլոյի սպանությունները կապում են սիցիլիական եւ կալաբրիական կլանների դիմակայության հետ:

ԱՐՑԱԽԱՆՔ ԼՈՆԴՈՆԻՑ

## Ինչքա՞ն հեռու կարելի է լինել իրականությունից

**Այս հարցն է տալիս Բեքինգհեմշիրից (Անգլիա) «Ազգ»-ին աշխատակցող Օդեթ Բազիլը՝ անդրադառնալով օրեր առաջ հրապարակված այն լրատվությանը, համաձայն որի Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին շնորհվել է «Չաթամ հաուզ-2010» մրցանակը:**

**Մրցանակը շնորհող հեղինակավոր Միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտը՝ «Չաթամ հաուզը» գովասանքի խոսքեր է շռայլել նախագահի հասցեին, մատնանշելով նրա ջանքերը հարեւանների հետ հաշտեցման, Թուրքիայում մարդու իրավունքների հարցերի բարելավման եւ երկրի փոքրամասնությունների հանդեպ հանդուրժողական մթնոլորտ ստեղծելու գործընթացներում:**

**«Եթե «Չաթամ հաուզի» փաստահավաք խումբը Թուրքիա այցելեր եւ հարցազրույցներ ունենար հարեւան երկրների ներկայացուցիչների հետ, ապա այդ մրցանակի փոխարեն նախագահին հարցերի տարափով կողողեր եւ պատասխան կակնկալեր, թե ինչո՞ւ արդեն 17 տարի նա փակ է պահում սահմանը Հայաստանի հետ, ինչո՞ւ հայկական եկեղեցիները, զրկվելով իրենց խորհրդանշական խաչերից, դառնում են լավագույն դեպքում թանգարաններ, իսկ վատագույն դեպքում՝ ախոռներ եւ նույնիսկ հասարակական տներ, եւ վերջապես, ինչո՞ւ մինչեւ օրս շարունակվում է 1915-ի ցեղասպանության ժխտումը», գրում է Օդեթ Բազիլը եւ եզրափակում իր ակնարկը, նշելով, որ խղճի, արդարության եւ բարոյականության նվազագույն նորմերը պահպանող որեւէ մեկի համար շնորհված մրցանակը «դժվար մարսելի» է:**

**Հ. Ծ.**

## Ավստրալիայի Ռայդ քաղաքի նորընտիր քաղաքապետը Արթին Էթմեքջյանն է

**Սիդնեյից նոյեմբերի 9-ին խմբագրությանն ուղղված իր հաղորդագրության մեջ Արթուր Հակոբյանը գրում է, որ նման բարձր պաշտոնի արժանացած առաջին հայորդին «ժամանակ չունի ըմբոշխնելու իր դափնիները, քանի որ մարտահրավերներն ու անելիքները շատ են»:**

**Նա երկու տարեկան է եղել, երբ տարիներ առաջ ծնողները Եգիպտոսից տեղափոխվել են Ավստրալիա: Հպարտ քաղաքացին լինելով այդ հյուրընկալ երկրի, նա նույնքան հպարտությամբ հավասարիմ է մնում իր հայկական արմատներին եւ իր ընտրությամբ էլ ավելի ուժեղացնում երկրում հայերի հեղինակությունը: Նա հավաստիացած է, որ կկարողանա ավստրալահայերին, հատկապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին, առավել ներգրավել երկրի հասարակական կյանքում: «Ես կողմնակից եմ դրական փոփոխությունների: Ղեկավար պաշտոն զբաղեցնողը երբեմն ստիպված է լինում դժվարագույն որոշումներ ընդունել, բայց կարեւոր է, որ սկզբունքային լինի, արդարացի եւ անաչառ», նշել է նա:**

**Էթմեքջյանի ընտրատարածքում ապրում են, ըստ Հակոբյանի, 6-ից 8 հազար հայեր: Բնակչության մյուս ազգությունները չինացիներն են, կորեացիներն ու վիետնամցիները: Իսկ ընդհանրապես ամբողջ Ավստրալիայում հայերի թիվը հասնում է 40 հազարի, նրանց մեծ մասը այդ երկիր է գաղթել Միջին Արեւելքից եւ երեք չորրորդը բնակություն հաստատել Նյու Սաութ Ուելսում: Նրանք իրենց համար ստեղծել են աշխույժ գործունեություն ծավալելու բոլոր պայմանները:**

**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ**

ՆՅՈՒ ՅՈՐՔ

## Իշխան Աղա խան IV-ի նվերը ի պատիվ Վարդան Գրիգորյանի

**Շիա Իսմայիլի մահմեդականների 49-րդ ավանդական իմամ, իշխան Աղա խան IV-ը երկու միլիոն դոլարի նվիրատվությամբ Նյու Յորքի Բրաուն համալսարանում՝ ի պատիվ այդ համալսարանի 1988-97 թվականների պրեզիդենտ, վաստակաշատ մանկավարժ Վարդան Գրիգորյանի, հիմնել է իսլամական հումանիտար առարկաներ դասավանդելու համար «այցելու դասախոսի» հիմնադրամ, որը հնարավորություն է տալու կրթօջախին պատմության, կրոնի, մարդաբանության եւ գրականության մասնագետների հրավիրել տարբեր երկրներից, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի նոյեմբերի 23-ի համարը:**

**Դոկտ., պրոֆ. Վարդան Գրիգորյանը երկար տարիներ «Աղա խան» համալսարանի վարչական կազմի անդամ է եղել եւ իր պաշտոնավարության շրջանում է, որ իշխան Աղա խան IV-ը, որպես առաջին մահմեդական հոգեւոր առաջնորդ, ելույթ է ունեցել ամերիկյան գլխավոր ուսումնական կաճառներից մեկը ճանաչված Բրաուն համալսարանում: Ներկայումս Վարդան Գրիգորյանը Նյու Յորքի Կառնեգի կորպորացիայի պրեզիդենտն է:**

**«Հուզված եմ եւ երախտապարտ՝ իմանալով, որ իմ պատվին իշխան Աղա խան IV-ը նման առատաձեռն նվիրատվություն է կատարել Բրաուն համալսարանին: Նրան ամբողջ աշխարհում են ճանաչում՝ որպես համամարդկային արժեքների ջատագովի եւ կրթության ու լուսավորության կողմնակցի: Ողջունում եմ նրա քայլը եւ մի անգամ եւս շնորհակալություն հայտնում», նշել է այդ առթիվ Վարդան Գրիգորյանը:**

**Շոտլանդիայում 2005-ին կայացած հանդիսությունների ժամանակ Աղա խանին շնորհվել է «Մարդասիրության Կառնեգի շքանշանը», որը տրվում է միայն նրանց, ովքեր, ըստ Էնդրու Կառնեգիի, հարստության կուտակման հետ նաեւ հասարակության առջեւ պատասխանատվություն են զգում եւ փորձում են ամեն գնով աջակցել մարդկանց բարեկեցությանը: Աղա խանի բարեգործական ծրագրերը, ըստ տեղեկատվության, իրագործվել են Ուգանդայում, Քենիայում, Աֆղանստանում, Տաջիկստանում եւ այլ երկրներում: Նա նաեւ «Աղա խան» համալսարանն է հիմնել Պակիստանում:**

**Հ. Ծ.**

## Աշխարհի խոշորագույն բանկը Ֆրանսիայում է

**Աշխարհի խոշորագույն բանկը ոչ թե ԱՄՆ-ում է (որտեղ արգելված են վարկային կազմակերպությունների սեփական առեւտրական գործառնությունները) կամ Շվեյցարիայում (որտեղ կրկնակի խստացվել են կապիտալին ներկայացվող պահանջները), այլ Ֆրանսիայում: Դա BNP Paribas-ն է, հաղորդում է Բլումբերգ գործակալությունը:**

**Բանկի ակտիվները 2007-ի հունիսից մինչեւ 2010-ի հունիս աճել են 34 տոկոսով՝ հասնելով 2,24 տրիլիոն եվրոյի (3,2 տրիլիոն դոլար): Դա համարժեք է Bank of America-ի եւ Morgan Stanley-ի ակտիվների գումարին:**

**Ֆրանսիայում չորս բանկեր ունեն 1 տրիլիոն դոլարը գերազանցող ակտիվներ: Դա համադրելի է ամերիկյան ցուցանիշների հետ, թեեւ ԱՄՆ տնտեսական ներուժը ինքնապատիկ մեծ է Ֆրանսիայի համեմատությամբ:**

**BNP Paribas-ն դեպոզիտների ծավալով եվրոպոտու խոշորագույն բանկն է: Ներկայումս ունի 200 հազար աշխատակից:**

ԱԶԳ

# Մշակույթ

***«Երեւանյան հեռանկարներ» 11-րդ միջազգային փառատոնի շրջանակներում նոյեմբերի 25-ին Երեւանի Մարզահամերգային համալիրում ընդամենը մեկ համերգով հանդես կգա այսօրվա բալկանյան ամենանշանավոր երգահանը՝ Գորան Բրեգովիչն իր նվագախմբով: Համերգը վերնագրված է «Ալկոհոլ»: «Երեւանյան հեռանկարներ» միջազգային փառատոնը հայտնի է բարձրարվեստ երաժշտական խմբեր եւ միջազգային երաժշտական հեղինակությունների Հայաստան հրավիրելու շնորհակալ գործունեությամբ:***

## Գորան Բրեգովիչը եւ նրա նվագախումբը



Արմատները՝ Բալկաններում, որտեղից որ նա սերել է, գլուխը 21-րդ դարում, որտեղ որ նա ապրում է, Գորան Բրեգովիչի երաժշտությունը միավորում է գնչուական փողային նվագախումբն ու բուլղարական ավանդական բազմաձայնությունը, էլեկտրական կիթառը եւ ավանդական հարվածային գործիքները՝ հետաքրքրական ռոքային շեշտադրությամբ... եւ այս ամենը՝ բազմաչարչար լարային նվագախմբի եւ արական երգչախմբի խոր հնչողությունների ֆոնին, ստեղծելով մի երաժշտություն, որը մեր հոգին ճանաչում է բնազդորեն, իսկ մարմինը ողջունում է պարելու անդիմադրելի ցանկությամբ:

Ծնվել է Սարաեւոյում, սերբ մորից եւ հորվաթ հորից: Մի քանի տարի առանց խանդավառության կոնսերվատորիայի ջութակի բաժնում ուսանելուց հետո 16-ամյա Գորանը կազմել է իր առաջին «Սպիտակ կոճակ» խումբը: Լինելով կոմպոզիտոր եւ կիթառահար՝ նա ընդունում է իր անսահման սերը ռոք-ն-ռոլի հանդեպ: «Այդ ժամանակներում ռոքը գլխավոր դեր ուներ մեր կյանքում: Դա միակ ձեւն էր, որով կարող էինք լսելի դարձնել մեր ձայնը եւ հրապարակայնորեն արտահայտել մեր դժգոհությունն առանց բանտարկվելու կամ նման մի բանի ռիսկի ենթարկվելու»:

Փիլիսոփայություն եւ սոցիոլոգիա ուսանելը նրան ամենայն հավանականությամբ կդարձնեին մարքսիստական վարդապետության ուսուցիչ: Իր «Սպիտակ կոճակ» խմբով Բրեգովիչը տասնհինգ տարի շարունակ մարաթոնյան շրջագայություններ կատարեց՝ անվերջ ինքնագրեր բաժանելով եւ երիտասարդության կուռքի դեր խաղալով արեւելաեվրոպական երկրներում, մինչեւ որ վերջնականապես հոգնեց ու ձանձրացավ այդ գործից:

### Երաժշտություն կինոյի համար

Միեւնույն անցյալով, նույն սերնդից եւ ունենալով նույն փորձառությունները՝ Գորան Բրեգովիչն ու Էմիր Կուստուրիցան կազմեցին մի շրջանակ, որն առանց խոսքերի էլ կարողանում էր հաղորդակցվել: «Գնչուների ժամանակը» ֆիլմից հետո Գորանն ազատորեն գործելու իրավունք ստացավ եւ երաժշտություն գրեց «Արիզոնայի երազանքը» կինոնկարի համար: Երաժշտությունը համահունչ է կինոնկարին՝ բանաստեղծական, ինքնատիպ եւ չափազանց գրավիչ: «Էմիրի կինոնկարների ամենահրաշալի կողմերից մեկն այն է, որ նրանք պատկերում են կյանքը ճիշտ այնպիսին, ինչպիսին այն կա՝ լեցուն բացերով, տատանումներով եւ անակնկալ իրադարձություններով: Դա այս անկատար, չկազմակերպված կողմն է, որը ես ամենից շատ եմ ցանկանում պահպանել: Նույնիսկ Իգգիի հետ ձայնագրած երգերը բավական թվով չեն արտադրվել: Դրանց մեջ միայն նրա ձայնն է եւ դրա խորքին՝ գնչուական նվագախումբը, որոնք նախապատերազմյան փողեր ու եղջյուրներ են փչում: Դա իսկապես շատ հասարակ բան է»: Սակայն Գորանը չի ասում, որ դա, հավանաբար, տասը տարվա ընթացքում Իգգիի լավագույն ելույթն է եղել: Նա նաեւ չի ասում, որ այս ակնհայտ պարզությունը հատուկ է միայն բացառիկ տաղանդի տեր արվեստագետներին:

Պատրիս Շերոն նրան վստահեց «Մարգո թագուհին» ֆիլմի երաժշտությունը, որը 1994-ին Կաննի կինոփառատոնում արժանացավ «Ոսկե արմավենու ճյուղ» մրցանակին: Գորանը տրամադրեց դյութիչ մի գործ՝ ռոքի շեշտադրությամբ: Էմիր Կուստուրիցայի «Ընդհատակի» (1995-ի Կաննի կինոփառատոնի «Ոսկե արմավենու ճյուղի» մրցանակակիր) երաժշտությունը նույնպես Բրեգովիչինն է: Բայց ոչ հաջորդ կինոնկարինը: Երեք տարվա համագործակցությունը «Ընդհատակում» բոլորին ուժասպառ արեց, եւ Էմիրը ստիպված էր նոր աշխատակազմ գտնել իր հաջորդ՝ «Սպիտակ կատու, սեւ կատու» կինոֆիլմի համար: Վերջերս Գորանը աշխույժ երաժշտություն գրեց Ռադու Միհաելեանուի «Կյանքի գնացքը» ֆիլմի համար, որը դրավել են քննադատները Վենետիկում, Սան Պաուլուում, Բեռլինում եւ հասարակությունն ամենուրեք, որտեղ որ ցուցադրվել է:

1995-ից հետո Բրեգովիչը նվիրվեց սեփական երաժշտության կատարմանը եւ իր երկրորդ բեմական կարիերային, չնայած ամբողջովին չթողեց կինոն: Նրա երաժշտությունը հնչում է Նանա Ջորջաձեի «27 բաց թողնված համբույրը» (2001) եւ Ունի Շթրաումեի «Երաժշտություն հարսանիքների եւ թաղումների համար» (2002) ֆիլմերում. վերջինում նա հանդես եկավ նաեւ որպես գլխավոր դերակատար: 2004-ին Բրեգովիչը կրկնեց միեւնույն արկածը. գրեց երաժշտություն եւ գլխավոր դեր կատարեց իտալական «Լքման օրեր» կինոնկարում, որն առաջին անգամ ցուցադրվեց 2005-ի աշնանը:

1990-ականների վերջին Կուստուրիցայի «Գնչուների ժամանակի» թոհուբոհից հետո Բրեգովիչը վճռեց իրականություն դարձնել իր մանկության երազանքը՝ ապրել Ադրիատիկ ծովի ափին, մի փոքրիկ տանը: Հարավսլավիայի պատերազմը խորտակեց այս եւ շատ ուրիշ երազանքներ, եւ Գորանը ստիպված եղավ լքել ամեն ինչ եւ տարագրվել Փարիզ...

### Շրջագայություններ

Բրեգովիչը համերգներով շրջել է Եվրոպայում, Ռուսաստանում, Իսրայելում, Կորեայում, Սինգապուրում, Հարավային Ամերիկայում (Արգենտինայում երկու համերգ է ունեցել Բուենոս Այրեսի լեգենդար «Լունա պարկ» ստադիոնում, նաեւ դարձել այնտեղի պատվավոր քաղաքացի):

1997-ի հունիսին Բրեգովիչն իր «Հարսանիքի եւ թաղման նվագախմբի» հետ մեկտեղ ձեռնարկել է մի հաղթական շրջագայություն Եվրոպայով մեկ՝ կենդանի կատարմամբ ներկայացնելով իր ամենագեղեցիկ ստեղծագործությունները՝ «Էդերլեզիից» («Գնչուների ժամանակը») մինչեւ «Մահվան մեքենայի մեջը» («Արիզոնայի երազանքը») եւ աշխույժ «Կալաշնիկովը» («Ընդհատակ»): Մուտքերի քանակը (յուրաքանչյուր համերգի համար՝ 3500-ից 10.000) եւ Հռոմի Սան Ջովաննի հրապարակում տեղի ունեցած համերգը 500 հազար հոգու ներկայությամբ փարատում են բոլոր կասկածները, որ նրա երաժշտությունն այժմ միջազգային մակարդակով իրական ազդեցություն ունի:

Գորան Բրեգովիչը շարունակում է իր կարիերան, եւ 70-80-ականներին իր երկրում ճանաչված երիտասարդ գերաստղը հաստատում է իր հեղինակությունը որպես հասուն, միջազգային երգահան:

Նրա մի շարք հատուկ ծրագրերից նշենք հետեւյալները: 2002-ի հունիսին Գորան Բրեգովիչը Փարիզի մոտի Սեն Դընի վանքում իրականացրած «Սիրտս հանդուրժող է դարձել» հաշտության թեմայով նախագծում միավորեց երեք կրոնների պատկանող երեք երգիչ աստղերի՝ Մոսկվայի ուղղափառ եկեղեցու, Թեթուանի (Մարոկկո) լարային խմբի եւ իր «Հարսանիքի եւ թաղման նվագախմբի» հետ միասին: Նախագիծը կյանքի էր կոչել Սեն Դընիի Հոգեւոր երաժշտության փառատոնը, իսկ տարին վերնագրված էր «Բախից Բրեգովիչ»: Մեծանուն Լուչանո Բերիոն նույն թվականի հուլիսին այդ նախագիծը հրավիրեց իր մոտ՝ Հռոմի Սանտա Չեչիլիա ակադեմիա, ուրիշ համերգներ էլ տեղի ունեցան Բիլբաոյի Գուգենհայմ թանգարանում եւ Ֆեսի Հոգեւոր արվեստի փառատոնում... եւ կարելի է ասել, որ «ժամանակակից երաժշտության» կոմպոզիտորի մեկ այլ կողմ ավելացավ Գորանի կարիերային:

2004-ին Գորան Բրեգովիչը գրեց իր առաջին օպերան՝ «Բրեգովիչի Կարմենը երջանիկ ավարտով»: Պարզունակ թատրոնի եւ օպերայի այս միախառնումն առաջին անգամ ներկայացվեց Իտալիայում, 2004-ի ապրիլի 17-ին, եւ այդ ժամանակից ի վեր ցուցադրվել է ավելի քան հարյուր անգամ: Այս գնչուական օպերան, որի լիբրետոյի, երաժշտության եւ բեմադրության հեղինակը Բրեգովիչն է (միայն մի քանի մեջբերում կա Բիզեի «Կարմենից»), կատարում են «Հարսանիքի եւ թաղման նվագախմբի» երաժիշտները:

2005-ի հունիսին Բրեգովիչի լեգենդար դարձած «Սպիտակ կոճակ» խումբն ի մի եկավ՝ ելույթներ ունենալով նախկին հարավսլավական երեք մայրաքաղաքներում: 70 հազար հանդիսականները Սարաեւոյում եւ Զագրեբում եւ 200 հազար հոգին Բելգրադում նրան ապացուցեցին, որ պատերազմներով միմյանցից տարանջատված ժողովուրդները կարող են առնվազն կիսել եւ վայելել իրենց համընդհանուր երաժշտական ժառանգությունը:

Հրապարակումը՝
ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆԻ

125-ԱՄՅԱԿ

## Կմեծարեն բանաստեղծ Ռուբեն Սեւակին

**1915 թ. թուրքական յաթաղանի զոհ դարձած մեծ բանաստեղծ, ազգային եւ հասարակական գործիչ Ռուբեն Սեւակը ոչ միայն խոսքով ու գրչով էր պաշտպանում իր գաղափարները, այլեւ կյանքի գնով ապացուցեց ժողովրդին անմնացորդ նվիրվածությունը:**

**ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատվել է Ռուբեն Սեւակին մեծարման միջոցառումների ծրագիր, ըստ որի հանրապետության տարբեր կրթական եւ մշակութային օջախներում անցկացվում են գրողի կյանքին եւ ստեղծագործությանը նվիրված միջոցառումներ: Այսօր Երեւանի Ռուբեն Սեւակի անվան թիվ 151 դպրոցում տեղի կունենա բանաստեղծ, արձակագիր Ռուբեն Սեւակին նվիրված միջոցառում, որին կմասնակցեն ՀՀ սփյուռքի նախարարության եւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակիցներ: Մ. Մ.**

## Վերանորոգումից հետո բացվեց Պարոնյան թատրոնի 69-րդ թատերաշրջանը



**Մի քանի տարի Լինսի հիմնադրամով նորոգվող թատրոնների ողջ ծանրությունը ընկել էր Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի ուսերին: Թատերասրահը համբերատարությամբ հյուրընկալում էր մյուս թատրոններին, հույս ունենալով, որ մի օր էլ իրենց թատրոնի վերանորոգման համար գումարներ կհատկացվեն: Եվ ահա մեկ տարի առաջ, չնայած ֆինանսական ճգնաժամին, հայրենի կառավարությունը պետբյուջեից հատկացրեց 330 միլիոն դրամ թատրոնի վերանորոգման համար:**

**Վերանորոգման հիմնական աշխատանքները ավարտվել են: Նոյեմբերի 10-ին պարոնյանցիները ոգեւորությամբ բացեցին 69-րդ թատերաշրջանը Հակոբ Պարոնյանի «Ատամնաբույժն արեւելյան» կատակերգությամբ: Բացմանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ շատ այլ պաշտոնատար այրեր, հյուրեր, թատերասերներ: Երկրի ղեկավարը թատրոնի գեղ. ղեկ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանի ուղեկցությամբ շրջեց վերանորոգված մշակույթի օջախում եւ գոհունակություն հայտնեց շինարարական աշխատանքների համար: Մեկ տարի տեւած շինվերանորոգման ընթացքում նոր ու շքեղ տեսք են ստացել թատրոնի բոլոր հարկերի ճեմասրահները, դիմահարդարման սենյակները, տեխնիկապես վերազինվել ու նորացվել է բեմական մասը, փոխվել եւ թարմացվել են բեմական հագուստները եւ որ ամենակարեւորն է՝ դերասանների համար ստեղծվել են բոլոր անհրաժեշտ պայմանները:**

**Ինչպես «Ազգի» հետ զրույցում նշեց թատրոնի տնօրենը, «դեռեւս որոշ աշխատանքներ կան, սակայն դրանք չեն խոչընդոտելու ստեղծագործական գործունեությանը: Կարեւոր է, որ հիմնական աշխատանքները ավարտված են, թատրոնի ջեռուցման հարցը լուծված»: Երվանդ Ղազանչյանը շնորհակալություն հայտնեց թատրոնի նկատմամբ նման հոգածության համար: Մայրաքաղաքի սրտում գտնվող թատրոնը ամբողջովին վերափոխված, գեղեցիկ ու շքեղ տեսքով իր դռները բացեց հանդիսատեսի առջեւ, նաեւ նոր երիտասարդ դերասաններով համալրված: Դեկտեմբերի 3-ին եւ 4-ին պարոնյանցիները թատերասերների դատին կհանձնեն Երվանդ Ղազանչյանի բեմադրությամբ դրամատուրգ Ժիրայր Անանյանի կոմեդիաներից անտիպ մի գործ: Իսկ Ղազարոս Աղայանի «Արեգնազան» հեքիաթի հիման վրա Շուշան Գեւորգյանը կբեմադրի տարեմուտի ներկայացում դպրոցականների համար:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Հայերը Ստոկհոլմի «Երաժիշտներ առանց սահմանների» ծրագրում

**Ստոկհոլմում կայացել է «Երաժիշտներ առանց սահմանների» համերգային ծրագիրը, որի ընթացքում հնչել է շվեդական, արաբական եւ հայկական երաժշտություն: Ամեն տարի ՄԱԿ-ի օրվա նախօրեին կատարվող այս միջոցառումը նպատակ ունի նպաստել ազգերի փոխճանաչմանը: Օրվա թեման եղել է Եգիպտոսը, գլխավոր ելույթը եղել է Կահիրեից հրավիրված «Անա Մասրի» վոկալ-գործիքային խմբինը, սակայն հանդես են եկել այլ երաժիշտներ եւս: Դաշնակահարուհի Կարին Հելման-Գեւորգյանը (Ստոկհոլմ) կատարել է Արամ Խաչատրյանի եւ շվեդ մի երգահանի գործերից: Պարուհի Լիլիթ Վարդանյանը (Փարիզ) կատարել է «Վալսեսա» պարային համարը ու նաեւ հայկական պար՝ «Դլե յամանի» երաժշտությամբ: Ծնունդով հայաստանցի այս երկու արվեստագիտուհիների ելույթներն արժանացել են ջերմ ընդունելության: Ա. Բ.**

## Նոր նշանակում Մայր աթոռ Սբ Էջմիածնում

**Նոյեմբերի 1-ին Գարեգին Բ կաթողիկոսի տնօրինությամբ Մայր աթոռ Սբ Էջմիածնի միաբան Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը նշանակվել է Մայր աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն: Նա, ձեռնադրված եպիսկոպոս՝ ձեռամբ երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ նշանակվել էր 1997-ին: 2000-ին ընտրվել է Մեծ Բրիտանիայի հայոց թեմի առաջնորդ: Եղել է Հայ եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ 1997-2000 թվականներին:**

**Նաթան եպս. Հովհաննիսյանը մեծ ակտիվություն է ցուցաբերել էկումենիզմի ոլորտում: Մասնակցել է տարբեր միջազգային կոնֆերանսների եւ էկումենիկ համաժողովների, եղել է Բրիտանիայի Արեւելյան ուղղափառ եկեղեցիների խորհրդի նախագահը, Անգլիայի եկեղեցիների խորհրդի համանախագահը: Ներկայումս Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսի «Հավատ եւ կարգ» հանձնաժողովի անդամ է: Սրբազան հայրը Ուկրաինայի Կադրային միջազգային ակադեմիայի թղթակից անդամ եւ պատվավոր դոկտոր է: Բեթղեհեմի պատվո քաղաքացի: Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ն 1995-ին նրան պարգեւատրել է «Իշխան Դանիել Մոսկվացու» շքանշանով, 2001-ին Ուկրաինայի նախագահը նրան արժանացրել է «Ծառայությունների համար» շքանշանի:**

# Ուժեղագույնը Վանաձորի թիմն է



Երեւանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզադահլիճում իրենց մրցավեճն ավարտեցին նաեւ մինչեւ 16 տարեկանների Հայաստանի պատանեկան առաջնության պարգեւները վիճարկող հանդբոլիստները: Առաջնությանը մասնակցում էին նախնական փուլի արգելքները հաղթահարած 6 ուժեղագույն ակումբները:

Չեմպիոնի տիտղոսի գլխավոր հավակնորդները Շենգավիթի եւ Վանաձորի թիմերն էին: Հենց նրանց միջեւ կայացած մեկնարկային հանդիպումն էլ վճռեց ոսկե մեդալների բախտը: Համառ պայքարում անցած մրցախաղում հաջողությունն ուղեկցեց վանաձորցիներին, որոնք հաղթեցին 34-30 հաշվով: Հետագա հանդիպումներում էլ վանաձորցիները հաստատեցին իրենց առավելությունը մրցակիցների նկատմամբ եւ առաջնության ավարտից մեկ տուր առաջ արդեն նվաճել էին չեմպիոնի տիտղոսը:

Ավելի համառ պայքար ընթացավ մրցանակային 2-րդ տեղի համար: Ավարտական տուրից առաջ միանգամից 3 թիմեր հավակնում էին արծաթե մեդալների: Սկզբունքային նշանակություն ուներ հանդբոլի մասնագիտացված դպրոցի եւ Շենգավիթի հավաքականների հանդիպումը, որն անցավ բավական համառ մրցապայքարում: ՀՄԴ-ի հանդբոլիստները որոշ առավելություն ունեին մրցակցի նկատմամբ եւ խաղի ընթացքում մեկ գնդակով առջեւից էին ընթանում: Թվում էր, թե ՀՄԴ-ի թիմին կհաջողվի խաղը հաղթական ավարտի հասցնել: Սակայն հանդիպման վերջին վայրկյաններին շենգավիթցիներին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Գրանցվեց ոչ-ոքի` 21-21: Դա ձեռնտու էր շենգավիթցիներին, քանի որ նրանք 7 միավորով գրավեցին 2-րդ տեղը: Իսկ ահա ՀՄԴ-ի հանդբոլիստները մնացին առանց առաջնության պարգեւների: Նրանք 5 միավորով գրավեցին 4-րդ տեղը: Իսկ բրոնզե մրցանակակիր դարձավ Աջափնյակի թիմը, որը վաստակեց 6 միավոր:

Մրցաշարի ավարտից հետո կայացավ առաջնության փակման արարողությունը, որի ժամանակ աչքի ընկած թիմերի խաղացողներին հանձնվեցին մեդալներ եւ պատվոգրեր: Պարգեւատրությունը կատարեցին Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի փոխնախագահ Արսեն Հակոբյանը, հանդբոլի ճանաչված մասնագետ Սպարտակ Ծառուկյանը: Ծննդյան 40-ամյակի առթիվ վանաձորցի մրցավար Արմեն Ուլիխանյանին հուշանվեր հանձնեց Հայաստանի հանդբոլի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Սարգիս Բայանը:

# Դեւիդ Հեյին ծանր մենամարտ է սպասում




Նոյեմբերի 13-ին Մանչեսթրում կկայանա գերծանրքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար հերթական մենամարտը: Աշխարհի ներկայիս չեմպիոն, 29-ամյա բրիտանացի բռնցքամարտիկ Դեւիդ Հեյը կմենամարտի իր հայրենակից, Սիդնեյի օլիմպիադայի չեմպիոն, 39-ամյա Օդլի Հարիսոնի հետ: Դեւիդ Հեյը պրոֆեսիոնալ ռինգում 25 մենամարտերից 24-ում հաղթել է, մեկում` պարտվել: Օդլի Հարիսոնը 31 մենամարտերից շահել է 27-ը, 4-ում ռինգը պարտված է թողել:

Այդ մենամարտը մեծ հետաքրքրությամբ է սպասվում: Բուքմեյքերները նախապատվությունը տալիս են Դեւիդ Հեյին, որի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 1,1 գործակցով: Իսկ ահա Հարիսոնի հաղթանակը գնահատվում է 6 գործակցով:

Ինչպես ընդունված է պրոֆեսիոնալ բռնցքամարտում, առաջիկա մենամարտի մասնակիցները բարձրագոչ հայտարարություններ են արել:

«Անհամբերությամբ եմ սպասում շաբաթ երեկոյին, որն իմ տոնն է լինելու: Քաջատեղյակ եմ, որ Հեյը շատ է մարզվել, որպեսզի 100 տոկոսով պատրաստ լինի մենամարտին: Սակայն ես էլ պատրաստվում եմ դրսեւորել իմ ողջ ունակությունները նրան հաղթելու համար: Շաբաթ օրը դուք կտեսնեք իսկական Օդլի Հարիսոնին: Ռինգ դուրս կգամ ու կոչնչացնեմ Հեյին: Հարիսոնը կդառնա աշխարհի չեմպիոն: Դա նրա ճակատագիրն է: Հեյը կարծում է, թե ռինգում իրեն թեթեւ զբոսանք է սպասում: Սակայն դա այդպես չէ: Եթե հարկ լինի, ես նրան 12 ռաունդների ընթացքում անընդհատ կհարվածեմ», հայտարարել է Օդլի Հարիսոնը:

«Շաբաթ օրը պատրաստվում եմ ռինգում առանձնահատուկ բան անել: Ներկայումս Օդլին հիանալի մարզավիճակում է, այնպես որ պետք է իր խոսքերը ռինգում գործով ապացուցի: Ինձ համար հաճելի է լսել, որ մրցակիցս մենամարտին նախապատրաստվում է, ինչպես պատերազմի: Դա ինձ ոգեւորում է: Սիրում եմ ռինգում կռվել եւ պատրաստ եմ նրան ճակատամարտ տալ, որին նա անհամբերությամբ սպասում է: Այս մենամարտին 3 ամիս սպասում էի եւ լրջորեն եմ նախապատրաստվել: Հենց նման մենամարտերի համար էլ շարունակում եմ բռնցքամարտիկ մնալ: Իմ նպատակն է զվարճացնել յուրաքանչյուր հանդիսատեսի, որը տեղ կգրավի Մանչեսթրի մարզադահլիճում», նշել է Դեւիդ Հեյը:

Առաջիկա մենամարտի մասին իր կարծիքն է հայտնել նաեւ գերծանրքաշային կարգի աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն Լեննոքս Լյուիսը. «Օդլին հասկանում է, որ Հեյի հետ մենամարտն իր վերջին հնարավորությունն է: Նա վստահ է իր ուժերին: Հարիսոնը տիրապետում է բավական հուժկու հարվածների, որոնք բավական են բռնցքամարտի աշխարհին զարմացնելու համար: Այս մենամարտը բրիտանական բռնցքամարտում կարող է շոկ առաջացնել»:

Վերջին անգամ Դեւիդ Հեյը ռինգ է դուրս եկել այս տարվա ապրիլի 3-ին: Նա Մանչեսթրում 9-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկել Ջոն Ռուիսին` պահպանելով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Օդլի Հարիսոնն այդ մենամարտից 6 օր անց Լոնդոնում EBU-ի վարկածով Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի համար մենամարտում նոկաուտով հաղթել էր Մայքլ Սպրոտին:

ՇԱԽՄԱՏ

## Մամեդյարովը հավասարվեց Արոնյանին

Միխայիլ Տալի հուշամրցաշարի 6-րդ տուրում Լեւոն Արոնյանը սեւերով 33-րդ քայլին հաշտություն կնքեց հետնապահներից մեկի` Իսպանիան ներկայացնող Ալեքսեյ Շիրովի հետ` առաջինն ավարտելով իր մրցախաղը: Շուտով միավորը բաժանեցին նաեւ Սերգեյ Կարյակինն ու Ալեքսանդր Գրիշչուկը, Հիկարու Նակամուրան ու Վան Հաոն, Բորիս Գելֆանդն ու Վլադիմիր Կրամնիկը: Վերջինն իրենց մրցավեճն ավարտեցին Շահրիյար Մամեդյարովը եւ Պավել Էլյանովը: 49-րդ քայլին հաղթանակ տոնելով, Մամեդյարովը վաստակեց 4 միավոր եւ հավասարվեց Արոնյանին:

3,5-ական միավորով առաջատարներին հետապնդում են Սերգեյ Կարյակինը, Ալեքսանդր Գրիշչուկը, Վան Հաոն եւ Հիկարու Նակամուրան: 3 միավոր ունի Վլադիմիր Կրամնիկը: 2 միավոր է գրանցված Բորիս Գելֆանդի օգտին: Աղյուսակը 1,5-ական միավորով եզրափակում են Ալեքսեյ Շիրովը եւ Պավել Էլյանովը:

## Ոչ-ոքի առաջին պարտիայում

Երեկ Բելգորոդում կայացան շախմատի Ռուսաստանի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչի առաջին հանդիպումները: Զավեն Անդրեասյանը սեւերով 58-րդ քայլին հաշտություն կնքեց ռուսաստանցի գրոսմայստեր Սանան Սյուգիրովի հետ: Վերջինս, որ անհատական վարկանիշով (2626) գերազանցում է Անդրեասյանին (2585), նախորդ փուլում 1,5-0,5 հաշվով հաղթել էր իր հայրենակից Ալեքսանդր Դանինին: Այսօր կկայանա մրցակիցների 2-րդ պարտիան, որում սպիտակներով կխաղա Անդրեասյանը:

1/4 եզրափակիչի մյուս հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Տիմոֆեեւ-Սմիռնով` 1-0, Խայրուլին-Զվյագինցեւ` 0,5-0,5, Ամոնատով-Պոտկին` 0,5-0,5:

Կանանց եզրափակիչ մրցախաղի առաջին պարտիայում Բայրա Կովանովան 29-րդ քայլին հաղթեց Իրինա Տուրովային:

## Հայ կարատեիստների հաջող ավարտը

Օդեսայում անցկացված ֆուլ կոնտակտ կարատեի Եվրոպայի առաջնությունում հաջող մրցելույթներ ունեցան հայ կարատեիստները: Դուբենդո ֆուլ կոնտակտ կարատեի ֆեդերացիայի հավաքականը Օդեսայում հանդես եկավ 11 մարզիկով, որոնք ընդհանուր առմամբ նվաճեցին 5 ոսկե, 4 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալ:

Ընդհանուր թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը մասնակից 17 երկրների մեջ գրավեց 2-րդ տեղը` իրենից առաջ թողնելով միայն մրցաշարի կազմակերպիչ երկրի կարատեիստներին:

Օդեսայում ցույց տված բարձր արդյունքների եւ վարպետության համար մրցումների կազմակերպիչ Զունդոկան ինտերնացիոնալի ղեկավար, 9-րդ աստիճանի վարպետ, ճապոնացի Տերո Չինոն խրախուսել է Հայաստանի հավաքականին: Մարզաձեւի միջազգային ֆեդերացիան էլ առաջարկել է Հայաստանի Դուբենդո ֆուլ կոնտակտ կարատեի ֆեդերացիային հաջորդ տարվա Եվրոպայի առաջնությունն անցկացնել մեր երկրում հոկտեմբերի 20-22-ը:

## Գելֆանդի փոխարեն Գրիշչուկը

Ինչպես տեղեկացրել ենք, նորվեգացի գրոսմայստեր Մագնուս Կառլսենը հրաժարվել է շախմատային թագի համար պայքարից: Եվ ահա ՖԻԴԵ-ն նրա փոխարեն հաջորդ տարի Կազանում կայանալիք հավակնորդների մրցաշարին մասնակցելու իրավունք է տվել ռուսաստանցի գրոսմայստեր Ալեքսանդր Գրիշչուկին: Վերջինս Գրան պրիի մրցաշարում ընդհանուր հաշվարկով գրավել է 3-րդ տեղը:

ՖԻԴԵ-ն նոր վիճակահանություն է կատարել, որի արդյունքում Լեւոն Արոնյանը հավակնորդների մրցաշարի քառորդ եզրափակիչում կմրցի ոչ թե Բորիս Գելֆանդի, այլ Ալեքսանդր Գրիշչուկի հետ: Անփոփոխ է մնացել միայն Թոփալով-Կամսկի զույգը: Մյուս զույգերը կազմել են Կրամնիկն ու Ռաջաբովը, Գելֆանդն ու Մամեդյարովը: Կազանում հավակնորդների մրցաշարը կմեկնարկի 2011-ի մարտին:

## Երեւանը կհյուրընկալի բռնցքամարտիկներին

Ինչպես տեղեկացանք բռնցքամարտի Հայաստանի ֆեդերացիայից, հաջորդ տարվա օգոստոսի 11-15-ը Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կանցկացվի 2011-ի Եվրոպայի մինչեւ 18 տարեկանների առաջնությունը: Այս մասին որոշումն ընդունվել է բռնցքամարտի Եվրոպայի կոնֆեդերացիայի գործադիր կոմիտեի նիստում:

Հայաստանը բռնցքամարտի միջազգային խոշոր մրցաշարերի կազմակերպման որոշակի փորձ արդեն ունի: Մասնավորապես 2009-ի մայիսին Երեւանում անցկացվել էր բռնցքամարտի աշխարհի պատանեկան առաջնությունը, որը բարձր մակարդակով էր կազմակերպվել:

## Հաջողությունն ուղեկցեց Էդբերգին



Կայմանյան կղզիներում անցկացված թենիսի վետերանների մրցաշարի հաղթող ճանաչվեց շվեդ Ստեֆան Էդբերգը: Եզրափակիչում նա հաղթեց ռուսաստանցի Մարատ Սաֆինին (7-6, 2-6, 10-8):

Վետերանների այս մրցաշարն անցկացվում է 2005-ից: Մրցաշարին մասնակցում են 30-ից բարձր տարիքի թենիսիստներ: Ընդ որում մասնակիցները ժամանակին պետք է նվազագույնը «Մեծ սաղավարտի» եզրափակիչ մտած լինեն կամ հավաքականի կազմում նվաճած լինեն Դեւիսի գավաթը, կամ էլ թենիսիստների դասակարգման ցուցակում տեղ զբաղեցրած լինեն առաջին հնգյակում: Մրցաշարի հաղթողին տրվում է վարկանիշային 800 միավոր եւ 60 հազար դոլար պարգեւավճար: Եզրափակիչի մասնակիցը ստանում է համապատասխանաբար 500 միավոր եւ 30 հազար դոլար:

Այս մրցաշարի ավարտից հետո Էդբերգն ունի 1600 միավոր, Սաֆինը` 1200: Իսկ դասակարգման ցուցակը գլխավորում է ավստրալացի Մարկ Ֆիլիպուսիսը (2100 միավոր): 2-րդ տեղում ամերիկացի Ջիմ Կուրյեն է (1900): Վետերան թենիսիստների հաջորդ մրցաշարը կանցկացվի նոյեմբերի 17-20-ը Դուբայում:

ՀԱՄԱՌՈՏ

## Մրցանակը հանձնվեց Ֆրանչեսկա Սկյավոնեին

Իտալացի թենիսիստուհի Ֆրանչեսկա Սկյավոնեն արժանացել է Heart Award մրցանակին ֆեդերացիայի գավաթի խաղարկություններում իր հավաքականին հավատարիմ լինելու համար: Մրցանակի դափնեկիրը որոշվեց մարզասերների քվեարկությամբ: Բացի Սկյավոնեից, մրցանակին հավակնում էին նաեւ իտալացի Ֆլավիա Պենետան եւ ամերիկացիներ Բեթանի Մատեկ-Սանդսն ու Լիզել Հուբերը: Հաղթող ճանաչվեց Ֆրանչեսկա Սկյավոնեն, որին հանձնվեց արծաթե ապարանջան եւ 10 հազար դոլար պարգեւավճար:

Այս տարի այդ մրցանակին արդեն արժանացել էին սերբ թենիսիստուհի Ելենա Յանկովիչը, բելգիացի Յանինա Վիկմայերը, բրազիլացի Մարիա Ալվեշը, սլովենացի Կատարինա Սրեբոտնիկն ու ճապոնացի Կիմիկո Դատե-Կրումը:

## ՖԻՖԱ-ն կօգնի Տոգոյի դարպասապահին

ՖԻՖԱ-ն որոշել է 100 հազար դոլար օգնություն տրամադրել Տոգոյի հավաքականի դարպասապահ Կոջովի Օբիլալեին բուժման համար: Նա հունվարին վիրավորվել էր, երբ Աֆրիկայի գավաթի խաղարկության ժամանակ հավաքականի ավտոբուսի վրա զինված հարձակում էր տեղի ունեցել:

Սեպտեմբերին Զեպ Բլատերը խոստացել էր 25 հազար դոլար հատկացնել, սակայն դա չէր բավարարի դարպասապահի հետվիրահատական վերականգնողական կուրսերի անցկացման համար: Օբիլալեն հույս չունի վերադառնալ ֆուտբոլ, սակայն վստահ է, որ կկարողանա կրկին քայլել:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

